

Ա.Ս. Քարամյան,
 Ա.Վ. Հակոբյան,
 Տ.Ա. Քասարյան

**ԲՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
 ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

Քննարկվում է խիստ կլիմայական պայմաններ ունեցող բարձր լեռնային բնակավայրերի ճարտարապետական, քաղաքաշինական համալիրի զարգացման խնդիրները: Մշակութային, բնական ժառանգությունը, կլիմայական պայմաններն ու ավանդական առանձնահատկությունները կարևոր ներուժ են ճարտարապետական, հատակագծային խնդիրների կարգավորման համար: Հնարավորությունների արդյունավետ կիրառումը կարող է նպաստել բնակավայրի և ողջ համայնքի տարածական զարգացմանը:

Առանցքային բառեր. *լեռնային լանդշաֆտ, բարձր լեռնային գոտի, ռեկրեացիոն ռեսուրսներ, կլիմայաբուժություն, էքստրեմալ տուրիզմ*

Կառուցապատման համար հարմարավետ տարածքների քաղաքաշինական բացարձակ իրացվածության պատճառով Հայաստանի Հանրապետության լեռնային միջին և փոքր բնակավայրերի ճարտարապետահատակագծային կառուցվածքը ենթարկվում է փոփոխությունների՝ կայուն տարածական զարգացման հետագա գործընթացն ապահովելու նպատակով: Խնդիրն արդիական է նաև Սևանի ջրհավաք ավազանի փոքր բնակավայրերի համար, քանի որ այդ բնակավայրերը հանդես են գալիս որպես կապող օղակ խիտ կառուցապատված միջավայրի և լեռնային արվարձանների միջև:

Կարևորելով մարդկային կենսագործունեության կայուն զարգացման գործընթացը՝ քաղաքաշինական միջավայրի կազմակերպման խնդիրը դիտարկվել է դրա համալրմամբ սոցիալ-տնտեսական, բնական ժառանգության, կլիմայի առանձնահատկությունների փոխհամաձայնեցված գործունեությունը՝ որպես տարածական զարգացման հիմք [1]:

Լեռնային տարածքները քաղաքակրթության կողմից ընկալվում են որպես կենսա-աշխարհագրական ծայրամասեր, սակայն դրանք հանդիսանում են տեղական յուրահատկություններով օժտված ինքնատիպ բարձր արժեքների և կենսաբազմազանության համակենտրոնացում: Դրանց արժեքավորության աստիճանը կախված է զարգացման պատմությունից, տարածքային, կլիմայական բազմազանությունից, բնակության համար տարբերակային հնարավորություններից, ինչպես նաև հարուստ լանդշաֆտից, երկրաբանական, ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկություններից: Լեռների բացառիկ աշխարհը տուն է լեռնային մեր երկրի հարյուրավոր բարձր լեռնային բնակավայրերի և Երկիր մոլորակի տարբեր աշխարհամասերի բազմաթիվ ժողովուրդների համար [2]:

Մարդկային կյանքի պատմությունը քաղաքաշինական պարզագույն գործունեությամբ սկսվել է լանդշաֆտների առանձնահատկությունների, տեղանքի հնարավորությունների օգտագործմամբ՝ բնակավայրերի անվտանգության ապահովման տեսանկյունից և հիմնականում պաշտպանական նպատակներով: Այս ռազմավարությունում հատկապես լեռնային լանդշաֆտի որոշիչ դերը բացատրվում է նման տեղանքների տեխնիկապես արդարացվածությամբ, գեղագիտական առավելությամբ՝ իմաստավորված քաղաքաշինական յուրացման հնարավորություններով [3]: Տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ուրբանիզացիան հիմնականում դժվարամատչելի տարածքներից տեղափոխվում է դեպի հարթավայրային գոտիներ, սակայն նման տարածքների պակասի պայմաններում, Երկիր մոլորակի վրա ներկայումս գրեթե համատարած, նորից առավել կարևորվում է լեռնային ռելիեֆի քաղաքաշինական յուրացումը:

Դժվարամատչելիությունը լեռնային բնակավայրերը չափազանց մեկուսացնում է ինտենսիվ ուրբանիզացված շրջաններից, որի պատճառով կենսագործունեությանն անհրաժեշտ ծառայությունները բնակչության համար ավելի թանկ են, քան հարթավայրային գոտիներում: Սակայն գլոբալիզացիայի, ենթակառուցվածքային համակարգերի՝ հաղորդակցության, կենցաղային պայմանների բարելավման, տեղեկատվության հասանելիության ինտենսիվացումն ու մատչելիության ազդեցությունը լեռնային ինքնատիպ բնակավայրերի, լանդշաֆտների, ավանդույթների պահպանման ուղղությամբ միանշանակ չէ:

Հիմնախնդրի շրջանակներում հետաքրքիր է ուսումնասիրել Ալպյան տարածաշրջանի փոքր և սահմանային բնակավայրերի պահպանման և զարգացման խնդիրները, դրանց հարող տարածքների քաղաքաշինական կարգավորման ուղղությամբ իրականացվող գործողությունները:

Ալպիական լեռնային փոքր բնակավայրերը ստեղծում են մուտքի գոտի դեպի ընդարձակ ազդմերացիա կամ կենտրոնական տարածք: Այս բնակավայրերն անցումային գոտիներ են ինտենսիվ ուրբանիզացված հարթավայրային և լեռնային տարածքների միջև: Արդյունաբերական համակարգը այնպես, ինչպես գյուղատնտեսությունն ու տուրիզմը, կազմում են տարածաշրջանի բնակավայրերի մեծամասնության սոցիալ-մշակութային պատմության մասը՝ ձևավորելով տարածական զարգացման հիմնական բազա [4]:

Թվարկվածները հատկանշական են նաև Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք համայնքի համար, որի տարածական զարգացման հնարավորությունները բացահայտվեցին 2012 թ. մշակված գլխավոր հատակագծում [5]: Գեղարքունիք գյուղը գտնվում է Գավառից 12 կմ, իսկ Երևանից 105 կմ հեռավորության վրա, Սևանի ավազանի փոքր գյուղերից է՝ հիմնադրված 7-րդ դարում:

Ողջ Գեղարքունիքի մարզն իր հարակից գոտիներով գտնվում է հանրապետության տարածքի բարձունքային նիշերով սահմանված լեռնային և բարձր լեռնային գոտում: Գյուղը, որ հիմնականում գտնվում է 2040...2150 մ/նիշերի սահմաններում, իսկ համայնքի որոշ տարածքներ

ծովի մակարդակից բարձր են 2307 *ւ*-ով, տարածքների բարձունքային նիշերի դասակարգման համաձայն բարձր լեռնային է:



Նկ. 1. Գեղարքունիք գետի ակունքները



Նկ. 2. 14-րդ դարի թևավոր խաչքար Ս.Գևորգ մատուռի մոտ

Բարձր լեռնային, խիստ ցամաքային, սակայն առողջարար ցուրտ կլիմայով բնակավայրը տարածված է Գեղարքունիքի լեռների արևելյան լանջին՝ Գավառ մարզկենտրոնից դեպի հարավ՝ Սևանա լճից դեպի արևմուտք ընկած լեռնային բարձունքում: Այն լճի առափնյա գծից հեռացված է 6 *կմ*-ով՝ ավտոմայրուղուց դեպի լիճ ձգվող հյուսիսարևմտյան բարձր լեռնային հրվանդանի վրա: Բնակավայրի միջով, հարավից հյուսիս հոսում է Գեղամա լեռներից սկիզբ առնող, գարնանային ձնհալքի ամիսներին խիստ վարար Գեղարքունիք գետակը: Տրանսպորտային միակ կապն այլ բնակավայրերի հետ իրականացվում է ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով, ընդ որում հիմնական կապը բնակավայրի հետ կատարվում է Երևան-Վարդենիս պետական նշանակության (Մ-10), այնուհետև՝ տեղական նշանակության ավտոճանապարհներով, ինչպես նաև գրունտային ճանապարհներով՝ հիմնականում մարզի մայրուղային ճանապարհներից դուրս գտնվող գյուղական բնակավայրերի հետ: Բնակավայրը հիշատակվում է վաղ ժամանակաշրջանից, որի մասին վկայում են գյուղի մոտակայքում պահպանված երեք-չորս բնակատեղիների ավերակները:

Համայնքի ողջ տարածքը բարձր լեռնային քաղաքաշինական-տնտեսական թույլ յուրացված գոտում է, որտեղ առանձին գագաթների բարձրությունը հասնում է մինչև 3600 *ւ*, Աժդահակի գագաթը՝ 3598 *ւ*, տեղակայված Գավառ մարզկենտրոնից դեպի հարավ՝ Սևանա լճից դեպի արևմուտք ընկած լեռնային բարձունքում: Գյուղը հիմնականում գտնվում է Գեղամա լեռների արևելյան լանջին՝ այնտեղից հոսող Գավառագետի Գեղարքունիք լեռնային վտակի երկու թեք լանջերին:

Համայնքի տարածքում 13...14-րդ դդ. կառուցվել է Ս. Ստեփանոս մատուռը, որը նորոգվել է 2010թ.: Այստեղ պահպանված են դամբարանադաշտեր և գյուղատեղիների ավերակներ: Լեռնալանջերին 2300 *ւ* մինչև 2800...3000 *ւ* բարձունքներում տարածված մերձալպյան

մարգագետինները, որպես արոտավայրեր և խոտհարքեր, նպաստում են անասնապահության զարգացմանը:

Գեղարքունիք բնակավայրը հիշատակվում է վաղ ժամանակաշրջանից: Դրա մասին են վկայում գյուղի մոտակայքում պահպանված երեք-չորս բնակատեղիների ավերակները:

«Չոր ավերակներ» գյուղատեղին գտնվում է գյուղից 7 կմ դեպի հյուսիս-արևելք՝ Սևանա լճի ափին, Գավառ-Մարտունի հանրապետական մայրուղու աջ և ձախ կողմերում: Այստեղ պահպանվել են 14...17-րդ դարերին թվագրվող գերեզմանոցը, Ս. Գևորգ մատուռը, ձիթհանի և բազմաթիվ տարբեր նշանակության շինությունների ավերակներ, մեծաքանակ խաչքարեր և դրանց բեկորներ:

«Մանուշարի գյուղ» գյուղատեղին գտնվում է գյուղից 1,5 կմ դեպի արևելք՝ ջրամբարի ափին: Մեզ են հասել հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ ավերակ շինություններ, կացարանների մնացորդներ՝ աղավաղված հատակագծային կառուցվածքով և քարակույտերի տեսքով: Բնակավայրի երեք դամբարանադաշտերն էլ թվագրվում են մ.թ.ա. 2...1 հազարամյակներին, որոնք հարուստ են 3...7 մ տրամագիծ ունեցող կրոմլեխներով, իսկ 1,8 կմ դեպի հարավ-արևմուտք գտնվող մ.թ.ա. 2...1 հազարամյակներին թվագրվող ամրոցում առկա են խեցեղենի բեկորներ և կրոմլեխներով շրջագծված դամբարանադաշտեր:

Եթե բնակեցման համար սահմանային նիշերը 2000...2100 մ բացարձակ բարձրություններն են, ապա ռելիեֆային բարդ պայմանների պատճառով այն գերազանցում է ընդունված մակարդակը՝ հասնելով 2350 մ, որի շրջանակներում էլ ձևավորվել է գյուղի քաղաքաշինական համակարգը: Համայնքի տարաբնակեցման համար պիտանի տարածքները զարգացել են դեպի բնակավայրի հարավային և արևմտյան գոտիները: Բնակավայրի տարածքային զարգացման ուղղությունները գլխավոր հատակագծով ամրագրվել են առավել ցածր բարձունքային նիշերում՝ գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերում: Հաշվի առնելով ժողովրդագրական աճի միտումը՝ այդ տարածքները մեծ չեն, սակայն բավարար՝ հնարավոր տարածքային զարգացման համար (մոտ 20 հա): Սևանի ավազանի ռեկրեացիոն գոտու սահմանների 8...10 կմ ընդարձակման արդյունքում այն ներկայումս ընդգրկում է նաև Գեղարքունիք համայնքի տարածքների հարավարևելյան և հարավային գոտիները: Դա լավ հնարավորություն ընձեռեց կազմակերպելու հանգստի և ժամանցի միջավայր, որի ֆունկցիոնալ կազմակերպման համար ընտրվեց գյուղի հարավարևելյան գոտու լեռնային մերկացումներին (շինգիլներ) հարող հատվածը: Այստեղ քաղաքաշինորեն ամրագրվեց հյուրանոցային և ռեստորանային համալիր, որպես ռեկրեացիոն գոտի և սպասարկման ոլորտում աշխատատեղերի հնարավորություն՝ բնակիչների համար:

Գեղարքունիքի մարզում տարաբնակեցման համար պիտանի տարածքները սահմանափակ են՝ լեռնային բարդ ռելիեֆի առկայության պատճառով: Գտնվելով բարձր լեռնային բարդ ռելիեֆի գոտում, առավել բարդ և խիստ սահմանափակ են Գեղարքունիք գյուղի տարաբնակեցման համակարգի հնարավորությունները, ընդ որում, տարածքային ռեսուրսների

բարդությունը չէ սահմանափակման պատճառը, այլ համայնքի զբաղեցրած տարածքի տարաբնակեցման համար ոչ հարմարավետ բարձունքային բացարձակ նիշերի փաստը: Գյուղը զարգացել է արևմտյան և արևելյան լանջերով սեղմված ձորակում, գետի երկու ափերին՝ հյուսիսից դեպի հարավ: Կառուցապատման համար հնարավոր նպաստավոր տարածքները վաղուց սպառվել են, և զարգացումներն իրականանում են ավելի բարձր նիշերում:

Տարաբնակեցման համալիրը կարող է մասամբ զարգանալ մեծ թեքություն ունեցող և գյուղատնտեսության համար ոչ պիտանի տարածքներում՝ շրջակա միջավայրի պահպանության, ինժեներական նախապատրաստման միջոցառումների, կենսագործունեության համար հարմարավետ միջավայր ստեղծելու նկատառումով: Մեյսմակայունությամբ և այլ բարդություններով բնութագրվող ռելիեֆի պայմաններում, կառուցապատման համար սակավ հարմարավետ տարածքների առկայության իրողությամբ էապես արժևորվում է լեռնային բնակավայրերի և դրանց հարող տարածքների արդյունավետ օգտագործման նշանակությունը [5]:

Բացարձակ նիշերի մեծ տարբերությամբ առանձնացող Գեղարքունիքի մարզի լանդշաֆտային և կլիմայական պայմանները բազմազան են, որը հիմնականում պայմանավորված է ամբողջ մարզի բարձր լեռնային գոտիականությամբ, ինչպես նաև Սևանա լճի ազդեցությամբ: Չնայած իր գրաված դիրքին՝ Սևանա լճից հեռացվածությանը, այն, գտնվելով լճի ջրհավաք ավազանի տարածական միջավայրում (ջրբաժան գծից ներս), ենթարկվում է լճի էկոհամակարգի կարգավորման անմիջական ազդեցության գոտու համար սահմանված ռեժիմին: Լճի ջրհավաք ավազանը հարուստ է այն շրջափակող բարձր լեռնային զանգվածներից դեպի ամենացածր նիշը՝ Սևանա լիճ թափվող լեռնային գետերով, դրանց վտակներով և ձնհալից առաջացող այլ գետակներով: Այդ համակարգի մեջ է մտնում նաև Գեղարքունիք լեռնային գետակը՝ առավել ջրառատ գարնանային ձնհալքի և անձրևների ժամանակ:

Համայնքի տարածքը հարուստ չէ պատմության և մշակույթի հուշարձաններով, սակայն բուն Գեղարքունիքի մարզն է հարուստ ինչպես պատմամշակութային, բնական հուշարձանների առումով, այնպես էլ արգելավայրերի, արգելոցների, արգելավայրային գոտիների, հետաքրքիր լանդշաֆտների առկայությամբ, որոնցից առավել նշանակալից են՝ «Սևան» ազգային պարկը, «Գավառագետ», «Գիհի» կաղնուտային և այլ արգելավայրերը, ինչպես նաև բնական հուշարձաններով, արժեքավոր դամբարանադաշտերով, բնակատեղիներով, հինավուրց ժայռապատկերներ ունեցող քարանձավներով հարուստ այլ տարածքներ: Մարզի արժեքավոր բնական հուշարձանների շարքին են դասվում Գեղարքունիք, Լանջաղբյուր, Կարմիր գյուղ բնակավայրերի շրջակայքի ժայռային մերկացումները, Մարտունի, Գեղարքունիք, Աստղածոր, Վարդենիս գետերի վերին հոսանքների հովիտները, Արեգունի լեռնաշղթայի կաղնու և գիհու նոսր անտառները:



Նկ. 3. Հայնաչքի 2012-ին մշակված զարգացման գլխավոր հատակագիծը

Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային գոտիներում հայտնաբերված ժայռապատկերների չորս բացօթյա թանգարանները, որտեղ 1000...3200 մ բարձրություններում կան մոտ քսան հազար փորագիր պատկերներ, արժեքավոր տեղեկություններ են պարունակում մ.թ.ա V-I հազարամյակներում մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, արվեստի ու գիտելիքների, դիցամտածողության և սովորույթների մասին: Դրանցից Գեղամա և Վարդենիսի բացօթյա թանգարանները (մյուս երկուսը՝ Սյունյաց և Արագածի լեռնալանջերին) լավ հնարավորություն են ստեղծում գիտական և էքստրենալ տուրիզմի զարգացման համար: Գյուղի և հարակից տարածքների կլիման խիստ ցամաքային, չոր է՝ արևի ճառագայթման մեծ տևողությամբ (2500...2800 ժամ/տարեկան): Դա արևաբուժության լավ հնարավորություններ է ստեղծում, որը հատկանշական է Սևանա լճի գրեթե ողջ ավազանին: Այդ ցուցանիշները գերազանցում են

եվրոպական արևաբուժական առողջարանների պայմաններին (օրինակ շվեյցարական Ալպերին, Կարպատներին, Ալթային): Համայնքի կլիմայական պայմանները նպաստավոր և առողջարար են նաև օդաբուժության համար՝ հատկապես ամռան, գարնան վերջի և աշնան սկզբի ամիսներին:

Քանի որ Գեղարքունիք համայնքը զերծ է մայրաքաղաքի և մյուս բնակավայրերի բնակչության կողմից Գեղարքունիքի մարզի ռեկրեացիոն ռեսուրսների ինտենսիվ օգտագործման քաղաքականությունից, ապա տուրիզմի այս ձևերը մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել հատկապես հեծելակային տարբերակի կազմակերպման պարագայում, ինչպես նաև լեռնալանջերի առատ ձյունածածկույթի, արևոտ օրերի քանակի, լանդշաֆտի թեքությունների շնորհիվ նպաստավոր է զարգացնել ձմեռային սպորտաձևերը:

**А.С. Карамян,
А.В. Акопян,
Т.А. Касарян**

ПРИРОДНОЕ НАСЛЕДИЕ КАК ФАКТОР АРХИТЕКТУРНО-ГРАДОСТРОИТЕЛЬНОГО РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ПОСЕЛЕНИЯ

Рассматриваются задачи развития архитектурно-градостроительного комплекса высокогорных поселений с суровыми климатическими условиями. Культурное, природное наследие, климатические условия и традиционные особенности являются важным потенциалом для урегулирования архитектурно-планировочных задач. Эффективное применение возможностей может способствовать пространственному развитию всей общины.

Ключевые слова: горный ландшафт, высокогорная зона, рекреационные ресурсы, курортология, экстремальный туризм

**A.S. Karamyan,
A.V. Hakobyan,
T.A. Kasaryan**

NATURAL HERITAGE AS A FACTOR FOR DEVELOPMENT OF ARCHITECTURAL AND TOWN-PLANNING OF RURAL SETTLEMENTS

Article is devoted to the issues of architectural-town-planning development of highland settlements with harsh climatic conditions. Cultural and natural heritage, climatic conditions and traditional features are an important potential for resolving architectural and planning tasks. Effective application of possibilities can promote spatial development of the whole community.

Keywords: mountainous landscape, high-mountain zone, recreational resources, balneology, extreme tourism

Գրականություն

1. **Քարամյան Ա.Ս.** Հայաստանի Հանրապետության Մարտունի-Եղեգնաձոր լեռնային գոտու տարածական զարգացման հեռանկարները: ճարտ. թեկն. ... ատենախոսություն. - Երևան, 2007. - 115 էջ:
2. **Mountains of the World, Sustainable Development in Mountain Areas. The Need for Adequate Politiques and Instruments (Mountain Agenda).** - Berne, Switzerland, 2002. – P. 24-28.
3. **Руководство** по составлению раздела “Охрана природы и улучшение окружающей среды градостроительными средствами” в проектах планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов. – М., 1982.
4. **Perlik Manfred, Messerli Paul.** Mountain Research and Development // Urban Strategies and Regional Development in the Alps. - Switzerland, 2004.
5. **ՀՀ Գեղարքունիքի** մարզի Գեղարքունիք համայնքի զարգացման գլխավոր հատակագիծ. - Երևան, 2012:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Քարամյան Անահիտ Սերգեյի, ճ.թ., դոց. (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ակադեմիկոս Ալ. Թամանյանի անվան Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (010)565390, (091)957001, anarchist@mail.ru: Հակոբյան Աննա Վաչիկի (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, դասախոս, (010)207703, (093)757550, annahakobyan0207@mail.ru: Քասարյան Տիգրան Անդրանիկի, ճ.թ. (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ակադեմիկոս Ալ. Թամանյանի անվան Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., (010) 272992, (094)011164:

Карамян Анаит Сергеевна, канд.архит., доц. (РА, г. Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н.с., кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, (010)565390, (091)957001. Акопян Анна Вачиковна (РА, г.Ереван) - НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, преподаватель, (010)207703, (093)757550. Касарян Тигран Андраникович, канд.архит. (РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н. с., (010) 272992, (094)011164.

Qaramyan Anahit Sergey, doctor of Philosophy (Ph.D) in Architecture, associate prof. (RA, Yerevan)- NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, scientific researcher, chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, (010)581539, (091)957001, anarchist@mail.ru. Hakobyan Anna Vachik (RA, Yerevan) - NUACA, chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, (010)207703, (093)757550, annahakobyan0207@mail.ru. Kasaryan Tigran Andranik, doctor of philosophy (Ph.D) in architecture (RA, Yerevan)- NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, scientific researcher, (010)272992, (094)011164.

Ներկայացվել է՝ 26.06.2014թ.

Ընդունվել է տպագրության՝ 03.09.2014թ.